

~~ՀԱՄԱԿԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ~~
ՀԱՄԱԿԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
IX ՀԱՄԱԳՈԽՄԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ


ԳԱԼԵՐԱԿԱՆ, 8ԵՎ, ԳՈՐԾԵՆԻՒՆ,

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՌԻԹՅԱՆ
ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

ՀԱՄԼԿԵՍԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
IX ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԳԱԼՅՈՆՈՎ, ՅԵՎ. ԳՈՐԾԵՆԻՆ

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ
ՌԱՋՄԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ



ՊԵՏԱԿԱՆ

1931

ՅԵՎՀՈՎ

ԿՄՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՑԵՆ
ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Խ. Ս. Հ. Մ-Ի ԴԵՄ

«Համաշխարհային տնտեսական ճգնաժամի
հետ սերտ հյուսված վերջին տարիների միջազգա-
յին դրության լույսի տակ, հակախորհրդային ռազ-
մատենչ կամպանիաների լույսի տակ, վորոնք եւ լ
ավելի նենդամտորեն և հետեւողականորեն տար-
վում են ամեն զույնի իմացերիալիստների կողմից,
կամպանիաներ, վորոնք հիմնվում են այն հեքյանքի
վրա, թե ժամանակակիրից «քաղաքակիրթ» հասա-
րակության, այսինքն կապիտալիզմի բոլոր, բա-
րագի բոլոր թշվառությունների աղբյուրը «Կար-
միր Առակվան» և, միլիտարիզմի սանձարձակու-
թյան և հսկայական սպառազինումների լույսի
տակ, մենք ձեզ հետ միասին միանդամայի բացա-
հայտ կերպով պիտի տեսնենք, վոր գալիք սպան-
գանոցը գլխավորապես և առաջին հերթին պատ-
րաստվում ե մեր դեմ: Ահա ընկերներ, այս յեղա-
կացությունը մենք պետք ե ող շնորհնք մեր ական-
չին» (Վորոշիլով):

Պետերասի Տպարան
Գլավիա 6859 (բ)
Հրատ. № 1854
Պատվեր 5331
Տիրաժ 6000

2611-Ա9-1



Բուրժուազիան շատ լավ ե հասկանում, վոր
առանց լրբջ և հարատե պատրաստության, ան-
կարելի յէ պատերազմ սէսէլ ԽՍՀՄ-ի դեմ, և նա
հաշվի առնելով համաշխարհային և քաղաքացիա-
կան պատերազմների ու սպիտակ-չինական ավան-
տյուրայի փորձերը, ուժեղ կերպով պատերազմի
յէ պատրաստվում մեր դեմ: Իսկ ի՞նչ ուղիներով
են ընթանում այդ պատրաստությունները:

Առաջինը՝ բուրժուազիան տանում ե ինտենսիվ
արտաքաղաքական պատրաստություններ: Վերջին
3-4 տարվա ընթացքում մեր արելմայան հարեվան-
ները կնքեցին մի շարք ուազմա-քաղաքական դա-
շինքներ ուղղված ԽՍՀՄ-ի դեմ: Դրանցից կարե-
վորներն են. — լեհ-ֆրանսիական, լեհ-ռուսիմինա-
կան, Փրանս-ռուսիմինական, լատվիա-եստոնական,
գաղտնի համաձայնություն լեհաստանի, լատվի-
այի և Եստոնիայի միջն, լեհ-չեխո-ալովակյան հա-
մաձայնությունը, Ռուսիմինիայի համաձայնությու-
նը Զեխո-Սլովակիայի և Հարավ-Ալավիայի հետ.
Դիպլոմատիական և հավանորհն զինլորական հա-
մաձայնություն լեհաստանի և Ֆինլանդիայի միջն
և այլն և այլն:

Ֆրանսիայի կողմից գլխավորվող այդ բոլոր
դաշինքների հիման վրա ստեղծված ե ամբողջովին

ԽՍՀՄ-ի դեմ ուղղված վորոշակի ուազմա-քաղա-
քական մի սիստեմ: Այդ սիստեմից իրեն մի քիչ
առանձնացած ե պահօնմ Անդիան, չցանկանալով
տակտիկական նկատառումներով կապել իրեն դա-
շինքներով: Բայց դա յերբեք չի նշանակում, թե
նա չի աջակցի ԽՍՀՄ-ի դեմ մղվելիք պատերազ-
մին. բավական ե հիշել Բոլգունի-Զեմբերլենի-
Հիկսի կոնսերվատիվ կառավարության «փորձե-
րը»:

Կարեվորագույն ինդիբներից մեկը, վորպիսիք
կնուում են իրենց առաջ իմպերիալիստները ինտեր-
վենցիան պատրաստելու արտաքաղաքականության
մեջ, հանդիսանում ե Գերմանիային ներգրավելու
կամ ծայրահեղ դեղքում, ապահովելու նրա բարե-
կամական չեղոքությունը: Այդ ուղղությամբ առե-
տուրը տարվում ե լրիվ ընթացքով:

Յերկրորդը՝ բուրժուազիան հսկայական և յե-
սանդուն աշխատանք ե տանում պատերազմի ուազ-
մա-տնտեսական նախասպատրաստման բնագավա-
ռում: Գոյություն ունեցող ուազմական արդյունա-
բերությունը՝ միակը, վորին չի վերաբերում ճշնա-
ժամը, բոլոր յերկրենրում վերակազմվում ե ուա-
ցինալազման և յենթարկվում: Բոլոր ուազմական
գործարաններում աշխատանքները գնում են 2-3

Հերթի : Կուտակվում է զենքի հսկայական պաշար պատերազմի համար : Կազմակերպվում է նոր ռազմական արդյունաբերություն, առանձնապես բարձը տեմպերով Լեհաստանում և Ռումինիայում : Լեհաստանը, որինակ, 1923 թվից մինչև 1931 թ. չորհիվ իր «բարձր» հովանավորողների, ավելացրել է ռազմական դործարանների թիվը 6-ից հասնելով 33-ի : Ռումինիան նույն ժամանակամիջում 5-ից 17-ի և այլն : Բոլոր պետություններում անց են կացրած ամենալայն պատրաստություններ՝ արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, տրանսպորտը և կուլտուրական հիմնարկները պատերազմական պետքերի սպասարկությանն արագ կերպով անցնելու համար : Ամեն տարի հարաբերական ու բացարձակ կերպով մեծանում են զինվորական բյուջեները և այդ բյուջեների ամենամեծ աճումը մենք տեսնում ենք դարձյալ մեր արեկմը տյան հարևան պետություններում : Այսպես որինակ, Լեհաստանի զինվորական բյուջեն 1927 թվին կազմում եր 844 միլ. զլոտի, 1928 թ. 1.025 միլ., իսկ 1931/32 թ. համար նախատեսված է մոտավորապես 1500 միլիոն, վորը համեմատած 1928 թ. զինվորական բյուջեյի հետ տափա և 46% աճում :

Ցերոպրդը՝ բուրժուազիան անում է ամեն ինչ,

վորովեսդի վերագինի և բավարարի իր բանակները նորագույն տեխնիկայով : Ժամանակակից իմպերիալիստական բանակները կատարելապես տարբերվում են այն վիճակից, ինչ նրանք ներկայացնում ենին համաշխարհային պատերազմի ժամանակ : Բներենք մի քանի որինակներ, գնդացիռների թիվը ժամանակակից բանակներում 20-30 անգամ ավել է, քան միջազատերազմյան բանակներում : Մինչև պատերազմը տանկեր բոլորովին չկային, իսկ այժմ Փրանսիական բանակում նրանց թիվը հասնում է մոտ 3000-ի, լեհականում 5 0-ի, անգլիականում 500-ի և այլն :

Համաշխարհային պատերազմի սկզբին կարելվորագույն կապիտալիստական յերկրների բանակներում (անգլիական, ամերիկական, ֆրանսիական, ծաղոնական, իտալական) ինքնաթիւներ կային 263 հատ, 1930 թ. 6250-իսկ մեր արեկմայան հարեւիանները (Լեհաստան, Ռումինիա, Լատվիա, Եստոնիա և Ֆինլանդիա) 1923 թ. ունեյին 350 հատ, իսկ 1930 թ. 805 :

Ինքնաթիւների այս թիվը հաշվվում է շարքերում, իսկ պահեստի ինքնաթիւններն, որինակ Լեհաստանում, յերկու անգամ ավել են :

Զնայած դոյություն ունեցող միջազդային հա-

մաճայնության այն մասին, թե ապագա պատերազմում չկիրառել թունավոր նյութեր, այնուամենայնիվ ամբողջ աշխարհի քիմիական լաբորատորիաներում տարվում են քիմիական հարձակման ինտենսիվ խիստ գաղտնի պատրաստություններ։ Այդ գենքի սոսկալի ուժի մասին մենք կարող ենք դատել միայն ապագա պատերազմի ժամանակ։

Սակայն ուզմա-տեխնիկական սպառազինման չափերը դեռ ևս լրիվ կերպով չեն տալիս բանակի հզորության պատկերացումը։ Պակաս դեք չի խաղում ուզմական տեխնիկայի վորակը։ Մի քանի որինակներ. յամանակակից տանկերը 3-5 անդամ արագընթաց են, զործողության ուագիուսը 2-3 անդամ ալել ե, ալելի դյուրաշարժ են և ալելի լավ սպառազինված, քան նրանք, վոր զործում եյին համաշխարհային պատերազմի ժամանակ։ Բացի ծանր, միջակ ու թեթեվ ախպի տանկերից, յերեվան յեկան հան 1-2 տանն ծանրությամբ վորքը տանկեր, վորոնք կարող են ճանապարհների վրա անցնել մեկ ժամում 50-60 կմ։, իսկ ճանապարհներից գույք մինչև 30 կմ։։ Կան տանկերի առանձին ախպեր, որինակ ամերիկական «Կրիստի» տանկը, վորոնք անփոփոք անցնում են մեկ ժամում 110 կմ։, իսկ թրթրաձև ընթացքով մինչև 68 կմ։ և կարող

են հաղթահարել ու անցնել նույնիսկ ճահճազած հողամասերով։ Ժամանակակից ինքնաթիւների արագությունը 3 անգամ (մինչև 300 կմ։ և ավել մեկ ժամում), բեռնաբարձությունը 21 անգամ (կան մինչև 3-6 առնն բարձրացնող ծանր ինքնաթիւններ, ընդ վորում այդ տեսակի ինքնաթիւնների առանձին ոռումքերը կշուռակ են մինչև 750 կմ։) և առանց իջնելու անընդհատ թոփչքի տեվողությունը 3-4 անգամ ալել ե, քան համաշխարհային պատերազմին գործող ինքնաթիւնները։ Պատերազմով կողմերի ամբողջ տերը խորիան, ճակատի դժիգ 600-800 կմ։ տարածության վրա կվտնվի ոմքակոծման և ողաքիմիական հարձակումների և ողային գեսանտների վտանգի տակ։

Անընդհատ կատարելազործվում է հրետանին։ Այսպես որինակ, Փրանսիական բանակում համաշխարհային պատերազմից հետո հրաձգության հասողությունը մեծացավ։

65	մմ.	թնդանոթը	5,0	կմ-ից	մինչև	9,0 կմ.
75	»		11,2	»		12,7 »
115	»		11,6	»		15,0 »
240	»		16,5	»		55,0 »
340	»		22,0	»		150—200 կմ.

Լայնորեն զարգանում ե բանակի մոտորիզացիան և մեխանիզացիան։ Մոտորը դուրս ե չպրոտու

ձիւն դումակից, մոտորը փոխարինում և ձիւն հրետագործում: Ավտոմոբիլն ու յերկաթուղին դարձել են շուքի տեղափոխության գլխավոր միջոցները:

1928—1930 թվերը հանդիսացան ամեն տեսակի գորքերից ամբողջովին մոտորիզացիայի և մեխանիզացիայի յենթարկված զորամասեր կազմակերպելու, հավաքնու և տակտիկա մշակելու տարիներ, և այժմ չկա մի յերկիր, վորտեղ չլինեն մեխանիզացիայի յենթարկված զորամասեր ու ջոկատներ: Բանակի մոտորիզացիա և մեխանիզացիա, ավիացիա և քիմիա—ահա այն հիմնական միջոցները, վորոնք մաքսիմում կերպով ուժեղացնում են բանակի սպառագինման հղորությունը: Կապիտալիստներն իրենց գլխավոր ուշադրությունը դարձնում են կովի այլ միջոցների զարգացման վրա: Բոլոր յերկրներում արգում են հոկայական դիտա-հետազոտական աշխատանքներ, գործի դնելու դեռևս պատերազմներում չփորձված կովի միջոցներ՝ բակտերիաներ, հեռամեխանիկա (հեռագորության վրա մեխանիզմի դեկավարումը ուղիղություն), այսպես կոչված «մահվան ճառագայթներ», հեռատեսողություն և այլն:

Վոչ պակաս, քան զորքերի մյուս տեսակները,

առում են ռազմա-հովային նախատորմերը: Այսպես որինակ, միայն 1927 թվին շարքերն անցան Անդրկայում 2 լինկոր, 4 հածանավ, 2 ականակիր և 2 սուզանավ: Ֆրանսիայում 3 հածանավ, 1 ռազմանակակիր, նավատորմիղի 6 լիգեր, մի քանի սուզանավներ ու ականակիրներ: Իտալիայում 2 հածանավ, 8 ականակիր, 8 նավախմբային ականակիր ու մի քանի սուզանավեր: Լեհաստանն, սկսած 1923 թ. մինչև 1928 թ. իր ծովային նավատորմը մեծացրել ե 1 ականակիրով, 3 սուզանավով, 4 զրաքանավերով և 1931 թ. յենթադրվում ե ավելացնել 1 հածանավ, 5 ականակիր և 3 սուզանավ: Ռումինիան նույն ժամանակամիջոցում ավելացրել ե իր նավատորմը 2 ականակիրով և մի քանի սուզանավերով: Խոկ 1931 թ. յենթադրվում ե ավելացնել ևս 1 հածանավ և 2 ականակիր:

Չորրորդը՝ բուրժուատուազիան ուժին կերպով միջոցներ ե վորոնում, վորպեսզի խաղաղ ժամանակավա բանակը դարձնի իրեն կամակատար զենքը բուրժուազիաներում: Միայն կարեռագույն կապիտալիստական յերկրներն (Անգլիան, Ամերիկան և Գերմանիան) արդեն ունեն վարձու, կամավոր ներից կազմված բանակներ: մյուսները դնում ենույն ճանապարհով (Ֆրանսիան իր բանակում ու

նի 50%-ից ավել կամավորներ ու գերակետիկներ)։ Սակայն բուրժուազիան հրաշալի կերպով համանում է, վոր յեթե խաղաղ ժամանակ նա կարող է յուլա գնալ պրոֆեսիոնալ - կամավորներով, բայց և այնպես պատերազմելու համար, յերբ բանակը մեծանում է մի քանի անգամ, նա հարկադրված է գենքի տակ առնել միտոնավոր բանվոր ու դյուզացի։ Վորագեղի ապահովի այդ միլիոնավորների անառարկելի հնաղանդությունը, վորաբեսղի ստիպի նրանց կովել ու մեռնել իրենց ոտար շահերի համար, բուրժուազիան ձեռք և առնում մի շարք նախադատրաստական կոնկրետ միջոցներ։ Բոլոր յերկրներում անց ե կացրած պետական ու տնտեսական ապարատի պատրաստումը պատերազմի համար։ Լիովին կամ աչքի ընկնող չափով ռազմականացրած են բոլոր տիպի ուսումնական հիմնարկուները։ Հսկայական չափերով ծառլալվում ե զինուրական պրոպագանդան, ընդունված են դրակոնական որենքներ, վորոնք պատերազմ հայտարարելու դեպքում անմիջապես կիրառվեն կյանքում։ Բուրժուազիան, բանակը լրացնելու նպատակով վստահելի կորիդ ստեղծելու համար, հատուկ ինտենսիվ աշխատանք է ծավալել։ Այդ աշխատանքն իրավուրծում են ֆաշիստական և կիսաֆաշիստական կազ-

մակերպությունները, վորոնք կազմված են զինվորական որինակով և ընդդրկում են նշանակալից կազմեր, գլուխավորապես յերկտասարդությունից։ Այս բոլոր կազմակերպությունները գտնվում են դինվարական մինիստրության զեկավարության տակ և նպաստավորվում կառավարությունների կողմից։ Մեծ ուշադրություն է դարձվում կանանց ուղմականացման վրա։ Լեհաստանում որինակ, գոյություն ունի մի որենք, ըստ վորի պատերազմի ժամանակ կանայք պետք է մոքիլիզացիայի յենթարկվեն։

Լեհաստանում 1928 թ. սկզբին հաշվվում եր 24 զինվորական միություն։ Նրանցից ավելի կարելվորները հանդիսանում են՝ հրաձգային միությունը, պահեստի սպաների միությունը, պահեստի յենթյունը, զինվորական զաղութայինների միությունը, ոլահսետի սպաների միությունը, պահեստի յենթասպաների միությունը, լեհական յերկտասարդության միությունը և այլն։ Լեհական ֆաշիստական միությունների անդամների թիվը 1928 թ. սկզբին հավասար եր մոտ 1,200 հազարի, հրաձգային միությունը (պիլսուղչիկներ) 550 հազարի։ Ողաքիմիական պաշտպանության լիգայի անդամների թիվը դեռ ևս 1926 թ. հաշվվում եր 402 հա-

զաք : Այդ լիգան մեծ աշխատանք է պահում ռդային նավատորմն ուժեղացնելու և զարգացնելու դորձում , կառուցում և անդարձներ , այերողբամներ , կազմակերպում և դաշտավայրեր և բերում ինքնաթիւններ , տանում և լայն պրոպագանդա և այլն և այլն : Սպորտը և արտազորային պատրաստությունները գտնվում են զինվորական մինիստրության վարույթի տակ , վորին կից կազմված և ֆիզիկական դաստիարակության արտադրային պատրաստության պետական վարչություն :

Թիմանիդիայում ազգաբնակչության ռազմականացումը տարվում է լայն ճյուղակորված ֆաշիստական «Շյուցկոր» կազմակերպության միջոցվ , վորն իրենից ներկայացնում և միակուռ , զինված և պատրաստված ուժ , վորի անդամների թիվը 1929 թ . հաշվվում էր 100.000 մարդ :

Նստոնիայում 1926 թվից որենսդրական կարդու անց ե կացրած միջնակարգ և բարձրադրույն դպրոցական հաստատությունների ուսանողության ռազմականացումը : Ազգաբնակության զինվորական պատրաստությունը իրագործվում է «Պաշտպանության միզա» կոչված զինվորական միության կողմից : Այդ միությունն ունի մի քանի տասնյակ հաշտամ : «Պաշտպանության լիգայի» կազ-

մակերպությունները կանոնավոր զինվորական պարապմունքներ են տանում , զորախաղեր կազմակերպում , սովորում փողոցային կովի տակտիկան և այլն :

Լատվիայում ազգաբնակության արտազորային պատրաստության գլխավոր աշխատանքները տանում ե զինվորական ֆաշիստական «Պաշտպանության կազմակերպությունը» կամ «Այսարդի»-ն : Այդ կազմակերպությունը 1927 թվին ուներ մոտ 30.000 անդամ :

Ֆաշիստական զինվորական կազմակերպությունների զարգացումն ու աշխատանքը մեր հարեվան պետություններում ավելի լայն թափ ե ըստացել : Պակաս զարդարացած չեն զինվորական ֆաշիստական կազմակերպությունները և մնացած բոլոր յերկրներում : Այսպես որինակ , իտալիայում «Բալլա» զինվորական յերիտասարդական կազմակերպության մեջ են 1,119,526 պատանի , ֆաշիստական միլիցիան զերևս 1927 թ . ուներ 259,000 անդամ :

Անգլիայում զինվորական կազմակերպությունները 1927 թ . ունեին 550.000 անդամ : Այս կազմակերպությունները կառուցված են բանակի որինակով (դասակ , վաշտ , գումարտակ , բրիդադ

և այլն), բացի դրանից՝ նրանք կցված են յերկրային բանակի առանձին մասերին, վորոնք և պատրաստանատու յեն նրանց պատրաստության համար։

Ֆրանսիայում զինվորական կազմակերպությունները 1927 թ. ընդգրկում ենին մոտ 1,100,000 մարդ։

Ճապոնիայում Համաճապոնական յերիտասարդական միությունը, վորն ունի 3,000,000 անդամ, իր գլխավոր նպատակն է դնում «յերիտասարդության հայրենասիրական զինվորական դաստիարակությունը և մարզանքը»։ Այնտեղ գոյություն ունի նաև, «Զինվորական արվեստի ընկերությունը», վորն ընդգրկել է իր մեջ զգալի թվով յերիտասարդներ և 1929 թ. իր շարքերում հաշվում եր 2,300,000 անդամ։ Բնակերության գլխավոր նպատակն է զինվորական դիտելիքների տարածումը։

Հինգրորդը՝ բուրժուազիան շատ լավ և հասկանում վոր առանց մասսային քաղաքականապես վերամշակելու չի կարելի տանել ժամանակակից մեծ պատերազմները և մանավանդ պատերազմ ԽՍՀՄ-ի գեմ։ Այս թե ինչու առանձնապես վերջին ժամանակները բուրժուազիան այդ ուղղությամբ հսկայական աշխատանք և թափում։ Իմ-

պերիալիստները, II ինտերնացիոնալի յեռանդուն աջակցությամբ, խիստ կերպով սքողում են պատերազմի իրենց պատրաստությունները։ Այդ ուղղությամբ հատկապես աշխատում են Ազգերի լիդան։ Նա ստեղծված եր համաշխարհային իմպերիալիստական պատերազմից հետո վոչ միայն նրա համար, վորպեսզի ամրացներ «հաղթանակի» արդյունքները դերմանեական իմպերիալիզմի վրա, այլ և նրա համար, վոր հասկացնի քաղքենուն, յետամնաց գյուղացուն և բանվորին այն միտքը, թե այս պատերազմը «վերջինն» եր, վոր կապիտալիզմը մտել եր «խաղաղ շրջանը» և վոր բոլոր միջազգային հակասությունները լուծվում են և կլուծվեն «խաղաղ» ճանապարհով Ազգերի լիդայում, զանազան նիստերում, հանձնաժողովներում, յենթահանձնաժողովներում, զինաթափման կոնֆերենցիաներում և այլն։

Իսկ «խաղաղաբարեւ» և «զինաթափման» անընդուառ դատարկաբանությունների քողի տակ նոր պատերազմի կատարելու պատրաստություններ են տարպում։

Բուրժուազիան և նրան հաջոտարիմ ծառաները-սոցիալ ֆանտաստները ինտերնացիան պատրաստելու համար համապատասխան են հասարակա-

կան կարծիք չահելու մեթողները խաբեյության և բամբասանքի միջոցով։ Քողարկել ԽՍՀՄ-ի հաջողությունները, խեղաթյուրել իրերի իսկական դրությունը, զրպարտել Խորհրդային Միության բանվոր դասակարգն և նրա կոմունիստական ավանդաբարդը, համոզել մասսաներին, թե ԽՍՀՄ-ն խեղզվում է ճշնաժամի և «ներքին կոլվուների» ճիրաններում, թե ԽՍՀՄ-ում մտցրած և պարտադիր աշխատանքը, թե յեկեղեցին յենթարկվում է հայածանքի ու հետանդումների և վերջապես թե կապիտալիզմի ժամանակակից ճշնաժամը և կապիտալիստական յերկրենրի աշխատավորության կրած առաջանական ահա ինտերվենցիոնիստական արջանում են ԽՍՀՄ-ի մեղքով, և վոր այդպիսիք լուծել հնարավոր և միայն ԽՍՀՄ-ն վոչնչացնելով ու նրա հաշվին. ահա ինտերվենցիոնիստական արջաններ գործնեյության մեթողները։ Այդ բոլոր հորջորջանքներն ապացուցելու նպատակով բուրժուազիան մոբիլիզացիայի յե յենթարկել և դործի դրել մասսաների վրա աղղելու բոլոր միջոցները։ Բուրժուական բոլոր կուսակցությունների մամուլը, սկսած միապետականներից մինչև «Ճախ» սոցիալ-դեմոկրատները, յեկեղեցին, ուստիոն, կինոն, թատրոնը և այլն իրար քաջալերե-

յով ու իրարից առաջ անցնելով տանում են սիստեմատիկ կատաղի հակախորհրդային ազիտացիա և մեկը մյուսի հետեւից «կամպանիաներ» ստեղծում։

Դժվար ե պատկերացնել ավելի անհեթեթ ու հիմար պատմություն, ինչպես որինակ կատեպովչչինան—մի ապուշ դառացանք այն մասին, թե ՊԲՎ դողացել և Փարիզից խելացնոր սպիտակ գվարդիական գեներալ Կուտիպովին։ Այս հիմարաբանությանը մեզ մոտ պիոներներն անդամ հավատ չի ընծայի, բայց տեսեք, վոր Ֆրանսիայում «հայատացին»։ Վոտքի հանվեց բացահայտ ու դաշտոնի ամբողջ վոստիկանությունը, թերթերը մի ամբողջ ամէս ամէն որ տպագրում եյին «ականատեսների» պատմությունները՝ «գողության» մանրամասնությունների մասին. և այդ բոլորը վորոշակի մի նպատակի համար, այն ե՛ մանր բուրժուազիան, չինովնիկին և առհասարակ քաղքենուն վախեցնել «ՊԲՎ-ի սոսկումներով», լայն մասսաներին ներշնչել այն միտքը, թե անհրաժեշտ և խզել գիտլումատիկական կապերը ԽՍՀՄ-էւս և պատերազմել նրա դեմ։

«Խաչակրաց արշավանքը» կրում եր ավել սուր ինտերվենցիոնիստական քնույթ։ «Ասոծու-

փոխանորդը յերկրի վրա», Հռոմի պատճն այդ և մ՛
պանիայի համար մորիլիղացիայի յենթարկեց ժա-
մանակակից բոլոր ռեակցիոն ուժերը։ Արխիվից
հանելու ԽՍՀՄ-ում «կրոնը հալածելու» մասին
մաշված առակը, արքեպիսկոպոսները, տերտեր-
ները, կսեցներն ու ուրիները բացահայտ կեր-
պով կոչ եյին անում բոլոր հավատացյալներին
դուրս դալ զինված խաչակրաց արշավանքի Խոր-
հրդային Միության դեմ։ Մեր հասցեյին ուղղա-
ված մեղադրանքենրի գատարկությունն ու ծիծա-
դելիությունն ակնհայտ է։ Սակայն պակաս ակըն-
հայտ չե նաև կամպանիաների նալատակը, այն ե՝
հավատացյալների հետամնաց մասսան զինել ԽՍ
ՀՄ-ի դեմ։

«Խաչակրաց արշավանքին» փոխարինեց «դեմ-
պինդյան կամպանիան», վորի իմաստը միանդա-
մայն պարզ է, ԽՍՀՄ մեղադրել «դեմպինդի» մեջ,
այսինքն՝ «դեն դցելու դներով» ապրանք արտա-
հանելու մէջ, դրանով մի կողմից Խորհրդային
միության վրա դնելով դյուղատնտեսական ապ-
րանքների դների անկման և համաշխարհային ադ-
րարային ճշնաժամի պատասխանատվությունը
և մյուս կողմից մերսոցիսալիստական շինարարու-
թյունը ձախողելու նպատակով տնտեսական բլո-

կտակա պատրաստել ԽՍՀՄ-ի դեմ։ Մյս վերջինն,
ավելի պարզ ու հասկանալի կլինի, յեթե հիշենք,
վոր «դեմպինդյան կամպանիային» ուղեկցում ե-
ցին ֆրանսիայի զեկավարությամբ յեվրոպական
պետությունների «ադրարային» և «տնտեսական»
կոնֆերենցիաների սերիան, վորոնց (կոնֆերեն-
ցիաների) հակախորհրդային բնույթն առանց
թագցնելու խոստովանվում եյին հենց իրենք մաս-
նակցողները։

Ի լրումն «դեմպինդյան կամպանիայի», գոր-
ծի յեր դրված ԽՍՀՄ-ում պարտադիր աշխատան-
քի մասին հորինված լեզենդան։

Մյս լեզենդան չափազանց հետաքրքրական ե-
նրանով, վոր ցույց ե տալիս, թե ինչպես փոխվում
են ինտերվենցիան պատրաստելու «ձեվերն ու մե-
թոդները»։ Պարտադիր աշխատանքի մասին յեղած
հեքյաթով բուրժուազիան փորձում ե ծածկել
ԽՍՀՄ-ի պատմական նվաճումները, վորտեղ վե-
րացված ե գործադրկությունը, նա փորձում ե քո-
ղարկել կապիտալի յերկրներում 35 միլիոն «ա-
պատ» գործադրուրիներ լինելու վաստը և վերստին
արտադաշնել Խորհրդային միության դեմ տնտե-
սական բլոկադայի պատրաստությունը, արդելե-
լով խորհրդային ապրանքների ներմուծումը, վո-

բանք իրը թե պատրաստված են պալ ուղիղ աշխատանքի միջոցով:

Այդ կամպանիայի ստությունն ու դարչելի հրեթյունն ավելի պարզ կլինի, յեթե համեմատության մէջ զնենք բանվոր գասակարդի և կոլտողնիկների ստեղծագործական յեռանդի հոկայական թափը, սոցմրցման և հարվածայնության հզոր աճումը ԽՍՀՄ-ում և «աղատ» կապիտալիստական յերկրների գաղութներում և կիսագաղութներում բայնորեն կիրառվող խկական ստրկական աշխատանիքի, բանվոր գասակարդի և աշխատավոր գյուղացիության անելանելի կարիքի ու աղքատության հետ, վորոնք խեղդվում են համաշխարհային տնտեսական ճգնաժամի ճիրաններում:

Վեցերորդը՝ չքավականանալով ինտերվենցիայի համար «արտաքին» պատրաստություններով, համաշխարհային բուրժուազիան փորձում է իրեն համար հենարան գտնել Խորհրդային միության ներսում, հանձին մեր յերկրում մեռնող դառնարդերի, վորոնք կատաղիորեն ընդդիմանում են սոցիալիստական հաղթական արշավին: «Արդյունաբերական կուսակցության» և «Մենչեւկայան կուսակցության» միջազգային սոցիալ-ֆաշիզմի ամբողջ զգվելի ու յերկերեսանի դերն ինտերվենցիան պատրաստելու գործում: Տարածելով ամենաստոր ստեր ԽՍՀՄ-ի մասին, փաստորեն կոչ անելով զինված ինտերվենցիայի և միաժամանակ քողարկելով նրա վտանգը, II ինտերնացիոնալի կուսակցությունները գերմանական սոցիալ-դեմոկրատիայի գլխավորությամբ բարդապես և նյութապես աջակցում եյին ուսուական մենշևիկների վնասաբարական աշխատանքներին, վորոնք բլոկ եյին կազմել կոնդրատե-Զայանովի եսերակուլա-

ցին, վոր Խորհրդային իշխանությունը ներսից տապալելու բոլոր հույսերն ի չիք դարձան, վոր պրոլետարիատի թշնամի գասակարդային ուժերի ներկայացուցիչները («արդյունաբերական կուսակցության», «Ա. Գ. Կուս.» «Բ. Ա. Դ. (մ)Կ.») ինտերվենցիան ակտիվ կերպով պատրաստելու համար կուրս եյին վեցըրել վնասաբարության, չպիտուածի ու դիվերսիայի մեթոդները և ընթանալով այդ ուղիով դարձել համաշխարհային, և առաջին հերթին Փրանսիական իմպերիալիզմի վարձու գործակալները:

Հենց այդ դատական գործերը և ամենից առաջ իհարկե մենշևիկների «Միության բյուրոյի գործը, բացին միջազգային սոցիալ-ֆաշիզմի ամբողջ զգվելի ու յերկերեսանի դերն ինտերվենցիան պատրաստելու գործում: Տարածելով ամենաստոր ստեր ԽՍՀՄ-ի մասին, փաստորեն կոչ անելով զինված ինտերվենցիայի և միաժամանակ քողարկելով նրա վտանգը, II ինտերնացիոնալի կուսակցությունները գերմանական սոցիալ-դեմոկրատիայի գլխավորությամբ բարդապես և նյութապես աջակցում եյին ուսուական մենշևիկների վնասաբարական աշխատանքներին, վորոնք բլոկ եյին կազմել կոնդրատե-Զայանովի եսերակուլա-

կային խմբակների և սևարյուրակային արդյունաբերական կուսակցության» հետ:

Այսպիսով «մեծ պետությունները» և նրանց վասսալները-մեր արևմտյան հարեվանները, պատերազմ պատրաստելու հսկայական աշխատանք են ծավալում: Պատրաստվելով տրդ պատերազմին, կապիտալիսանները հասկանում են, վոր նբայելը զւալի չափով կախված ե այն յերիտասարդության տրամադրությունից, վորը լրացնելու յերանակի շարքերը: Այդ իսկ պատճառով բուրժուազիան ամեն ճիգ գործ ե զնում, վորպեսզի մի իտարիզացիայի յենթարկի յերիտասարդությանը, դաստիարակի նրան ազգայնական վորդով, բուրժուազիայի շահերի համապատասխան, դարձնի նրան պատերազմի անառարկելի դեմք, առաջին հերթին ԽՍՀՄ-ի գեմ մղվելիք պատերազմում:

Մենք դիտենք, վոր այդ պատերազմը լինելու յերանակարգային պատերազմ, միջազդային բուրժուական հակահեղափոխական ուժերի պատերազմն ընդում պրոլետարական հեղափոխության: Պատերազմի յելքը կախված կլինի վոչ միայն զինվորական տեխնիկայից և իմպերիալիզմի խաղաղ ժամանակվան համական բանակից:

Աւ ֆաշիստական պահեստից, այլև և մի շաբաթուրիչ այլելի զարեղ ֆակտորներից և առաջին հերթին աշխատավոր մասսաների գեղի պատերազմն ունեցած վերաբերմունքից: Պատերազմի ընթացքում բուրժուազիան ստիլված պետք ե լինի բանակի կանչել նոր կադրեր, քանակով գերազանց խաղաղ ժամանակվա բանակին և բաղկացած գլուխավորապես բանվորներից ու գյուղացիներից: Այսպիսով բուրժուազիան հարկադրված պետք ե լինի պատերազմել հիմնականում բանվորների և գյուղացիների ուժերով և հենց այդ բանվորների ուժերով խաղաղ ժամանակվա արշյունաբերությունը վերակառուցել պատերազմական ակետքերին սպասարկելու համար: Իսկ կցանկանա՞ն և կեռվեն արդյոք բանվորներին ու գյուղացիները իրենց վասակարգային թշնամու—շահագործողների շահերի համար: Արդյոք բանվորները ֆարբիկաներում և գործարաններում կաշխատեն պատերազմի համար, պատրաստելով իրենց պլրութարական հայրենիքը—ԽՍՀՄ-ն վոչնչացնելու միջոցներ: Այս հարցը ծառացած լինելով բուրժուազիայի առաջ, այնուամենայնիվ չի դադարեցնում նրա ինտերվենցիոնիստական մագրությունները: Բուրժուազիան հույս ունի գուրս գալ

Հղնաժամից ԽՍՀՄ-ի հաշվին, նրա վեա բնակչութեամբ ճնաժամի ամբողջ ծանրությունը, պէտերազմի միջոցով լուծել իր բոլոր հակասութեամները, թուլացնել սոցիալիզմ կառուցող յերկրի հեղափոխականացող աղջեցությունը և կանգնեցնել համաշխարհային պրոլետարական հեղափոխության հղոր արշավի ընթացքը:

ԽՍՀՄ-ի դեմ միացյալ ճակատ ստեղծելու իմպերիալիստների այդ հաշիվներին ավելի զորեղ կերպով հակադրվում ե ԽՍՀՄ-ի պաշտպանելու համար ամբողջ աշխարհի պրոլետարների միացյալ ճակատը: Կապիտալիստական յերկրների տընտեսական ճնաժամի, գործազրկության հսկայական աճման և մեր սոցիալիստական շինարարության բուռն հաջողությունների աղջեցության տակ, ուշադրություն չդարձնելով խստադույն տերորին, աճում և ծավալվում ե պրոլետարիատի հեղափոխական շարժումն ամբողջ աշխարհում, ամբանում նրա համակրանքը ԽՍՀՄ-ի հանդեպ, աճում մեր յեղայրական կոմկուսակացությունների, կոմյերիտմիությունների, կարմիր պրոֆմիությունների ու բանվոր դասակարգի ուժը հեղափոխական մասամբայական կազմակերպու-

թյունների ազդեցությունը. կոիվներում կոփ-վում են չինական կարմիր բանակի շարքերը:

«Մենք չըջապատված ենք թշնամիներով» Այսում ե և կամի մեր բարեկամների քանակն ու վորակը, դա կնշանակի աճում և կապիտալիզմի թշնամիների քանակն ու վորակը» (Մ. Գորկի): Բուրժուազիան հասկանում ե այդ բանը և ահա թե ինչու ի միջի այլոց, պատերազմ՝ պատրաստելով ԽՍՀՄ-ի դեմ, նա վորձում է միջոցներ գտնել վոչնչացնելու ԽՍՀՄ-ն. առանց ստեղծելու բազմամիլիոն բանակներ, նախ և առաջ ընդարձակելով ու ամրացնելով զինվորական տեխնիկան: Բայց չե՞ վոր մեքնային մարդն ե դեկավարում, իսկ այդ մարդը-զինվորական շինել հագած բանվորն ու գյուղացին, իր վնասկան խոսքը կասի նոր պատերազմի ժամանակ:

ՀՆԴԱՄՑԱԿԸ ՅԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒՆԱ- ԿՈՒԹԹՅԱՆ ՀԻՄՔՆ Ե

Ապագա պատերազմը բավարարված կլինի կովի տեխնիկական միջոցների հսկայական նյութերով: Բայտ արժանույն գնահատելով հակառակորդի տեխնիկան, այնուամենայնիվ մենք չպետք ե աղդաբնակության մեջ տարածենք այն սխալ

տեղեկությունները, թե իմասերիալիստների զի՞ն-
վորական տեխնիկան դերազանցում և մերին:

Քաղաքացիական պատերազմի շրջանում մենք
ընտելացանք այն մտքին, վոր մենք աղքատ ենք
ու վատ զինված, վոր մենք կովում և հաղթում
ենք չնորհիվ մեր նպատակի գիտակցության և
մտսասայի մեծագույն հեղափոխական վերելքի։
Բայց այժմ չնորհիվ հնդամյակի հաջող հատար-
ման և գերակատարման, մեր յերկիրը, նրա հետ
նաև մեր կարմիր բանակը, պատրաստ են ապագա
պատերազմում հեղափոխական վողին բազմա-
պատկել մարտական տեխնիկայով։

Մենք հաջողությամբ առաջ ենք գնում կու-
սակցության առաջադրած խնդիրները կատարե-
լու ուղիներով—տեխնիկական—տնտեսական ասպա-
րիդում 8–10 տարվա մեջ հասնել ու անցնել առա-
ջազր կապիտալիստական յերկրներից։

Ծանր արդյունաբերության բնագավառում
(չուտուն և քարածուխ) մենք այնքան ենք առաջ
գնացել, վոր այս տարի կհասնենք Ֆրանոիային
ու Անդիային։ Մենք ստեղծեցինք մի շարք՝ ար-
դյունաբերություններ տեխնիկայի վերջին խոսքի
համաձայն։ Մեր ավիացիոն արդյունաբերությու-
նը բռնում է աշխարհի առաջավոր տեղերից մե-
ք։ Մեր ավտոմոբիլային և տրակտորային

գործարանները կառուցվել և կառուցվում են հա-
մաշխարհային տեխնիկային հասնելու հաշվով
և արդեն այս տարի մենք կունենանք տասնյակ
հազարավոր մեր սեփական ավտոմոբիլներն ու
տրակտորները։ Մեր գյուղատնտեսությունը
վճռականորեն վերակառուցվում և սոցիալիստա-
կան հիմունքներով, դրա հիման վրա խիստ կեր-
պով բարձրացնելով իր արտադրանքը։ Մենք վե-
րացնում ենք կուլակությունը, —վերջին լուրջ
կապիտալիստական գանակարգը, —համատարած
կոլեկտիվացման բազայի վրա։

Մենք ունենք պլանային տնտեսություն, վորը
բոլոր կապիտալիստական յերկրների հանդեպ մեղ
տալիս և հսկայական առավելություններ յերկրի
ուժերի հետևողական և պլանաչափ մոբիլիզա-
ցիայի գործում։

Երկրի ինդուստրացման ֆոնի վրա աճում է
մեր կարմիր բանակի ռազմական ու տեխնիկա-
կան հզորությունը։ Բերենք մի քանի որինակներ։
Պարսկաստանում 1930 թ. կայացած միջազդային
մրցություններին, վորտեղ մասնակցում եյին
նաև Փրանսիական ողաջունները, մեր կարմիր սա-
վառնորդները մեր ինքնաթիւներով առաջին տե-
րը գրավեցին։ Խորհրդային գործարաններում

չինված մեր տանկերն իրենց հիմնական վորակով
չեն զիջում արտասահմանյան տանկերին . նույնը
նաև սպառաղիման ուրիշ միջոցների նկատմամբ .
Տարեց տարի աճում և ամրանում և ռազմա-ծռ-
մային կարմիր նախատորմի ռազմական ու տեխ-
նիկական զորեղությունը :

Բայց այս բոլորը դեռ բավական չեն : Բուր-
ժուազիան պատրաստում են մեր դեմ մի քանի
պետությունների կոալիցիա : Յեկ մենք պատե-
րազմի դեպքում պետք են նրան հակադրենք Կար-
միր բանակը վոչ պակաս սպառազինությամբ , և
վոչ պակաս ռազմական տեխնիկայով :

Դրա հետ միաժամանակ պատերազմի դեպ-
քում ԽՍՀՄ-ն սեղմվելու յերլոկադայի ողա-
կում : Այդ հանդամանքը պահանջում է ամենա-
արագ թափով ազատել մեր յերկիրն արտաքին
կախումից : Ահա թե ինչու յերկիրի ինդուստրաց-
ման բարձր տեմպերի , արտադրանքի վորակի և
գյուղատնտեսության կողեկտիվացման համար
տարվող պայքարը վճռական նշանակություն ունի
մեզ համար :

«Կասեցնել տեմպերը — նշանակում են յետ
մնալ : Իսկ յետ մնացողներին խփում են : Բայց
մենք չենք ցանկանում խփած լինել : Վո՞չ , չենք

ցանկանում : Հին Ռուսաստանի պատմությունը
կայանում են նրանում , վոր նրան անընդհատ խը-
փում ելին յետամնացության համար : Խփում ե-
լին , մոնղոլական խաները : Խփում ելին տաճկա-
կան բեղերը : Խփում ելին շվեդական Փյողալե-
րը : Խփում ելին Լեհ-լիտոլյան պաները : Խփում
ելին անգլո-Փրանսիական կապիուալիատները : Խը
փում ելին ճապոնական բարոնները : Խփում ելին
յետամնացության համար :

Զինվորական յետամնացության , կուլտուրա-
կան յետամնացության , գյուղատնտեսական յե-
տամնացության համար : Խփում ելին վորովհետե-
ղա ձեռնուու յեր և անպատիժ մնում : Հիշեցեք
մինչեղափոխության պոյետի խոսքերը . «Դու և
աղքատ , դու և առատ , դու հզոր , դու և անզոր ,
մայր Ռուսաստան» : Հին բանաստեղծի այդ խոս-
քերը լավ անգիր ելին արել այդ պարոնները :
Նրանք խփում ելին և ավելացնում . «Դու և ա-
ռատ» , նշանակում ե կարելի յեշ շահվել : Նրանք
խփում ելին և ավելացնում . «Դու հզոր և անզոր» ,
նշանակում ե կարելի յե խփել ու կողովտել ան-
պատիժ : Այսպես ե կապիտալիզմի սրենքը—խփել
յետամնացներին ու թույլերին : Կապիտալիզմի
գայլի որենք : Դու յետ մնացիր , դու թույլ ես ,

նշանակում ե դու իրավացի չես, նշանակում է
կարելի յե քեզ խիել ու ստորացնել։ Դու ուժեղ
եմ, նշանակում ե դու իրավացի յես, նշանակում
ե քեզնից պետք ե դգուշանալ։ Ահա թե ինչու չի
կարելի մեղ այլեւ յետ մնալ» (Ստալին)։

Սակայն քիչ ե ստեղծել տեխնիկա ընդհան-
րապես և ուզմական տեխնիկա մասնավորապես։
Հարկավոր ե նաև լիովին տիրապետել նրան։
Հարկավոր ե ամենակարճ ժամանակամիջոցում
պատրաստել զինվորական մասնագետ—հրամա-
նատարների և բարձորակ մարտիկ մասնագետների
հսկայական կարգեր. —ոգաչուներ, մեխանիկներ,
տեխնիկներ, շոֆերներ, տանկավարներ, զրահա-
մեքենաներ ու տրակտոր վարողներ, քիմիկո-
ներ, կարգավորներ, սակրավորներ, գնդացրող-
ներ, հետալորներ և այլն և այլն։ Դա հեշտ դորձ-
չե և կարմիր բանակին անհրաժեշտ ե լուրջ և
բռնվակողմանի ողնություն։

IX ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԿՈՄՅԵՐԻ ՏՄԻՈՒ- ԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Յերկրի պաշտպանության համար մեր կատա-
րելիք նախապարաստական աշխատանքների մեջ
գլխավորն ու կարեորը հանդիսանում է կոմյերի-

տականների ուսումնական ուսուցումը, նրա միջա-
ցով մեր կարմիր բանակի համար պահեստի ուժեր
պատրաստելը։ «Կոմյերի ամիսությունը բանակի
բնական պահեստի ուժն ե» (Վորոշիլով), և այդ
յերեքմիլիոնանոց պահեստի յուրաքանչյուր ան-
դամ վոչ միայն խոսքով, այլ և գործով պետք ե
պատրաստ լինի մտնելու կարմիր բանակի շարքե-
րը, իր մարտական պատրաստությունը ոչնուք ե
զուգակցի ուզմական դիտելիքների ուսումնասի-
րության իր առողյա աշխատանքներին, դիտենալ
շարքը, դիտենալ բանակի կառուցվածքը, ան-
պայման կատարելագործված չափով դիտենալ
կարմիր բանակի զենքի տեսակներից մեկը, —այ-
սինքն անպայման ունենալ համապատասխան զին-
քորական կվալիֆիկացիա։

Յուրաքանչյուր կոմյերի տական պետք ե գի-
տենա, վոր լոկ «հրացանը վերցնելու, թնդանոթի
կամ տանկի մոտ գնալու պատրաստ լինելը գեռես
բավական չե, ճիշտ այնպես, ինչպես արտադրու-
թյան ասպարիցում բավական չե միայն պատ-
րաստ լինել կանոննելու պատահած զաղցյահի ա-
ռաջ ու նրա վրա աշխատել հանուն սոցիալիզմի
բարորության։ Դուք զիտեք, վոր կարելի յե զնալ
ու կանգնել պատահած զաղցյահի առաջ, կարելի
յե և... ջարդել այն, յեթե դու պատրաստված

չես այդ աշխատանքի համար այդ իսկ դագդաւճի
վրա, յեթե դու նրան չես ուսումնասիրել ին պես
հարկն ե, չգիտես նրան» (Վորոշիլով):

Ապագա պատերազմում, «վորը մենք չենք ցան-
կանում, վորի դեմ պայքարում ենք, բայց վորը
պատրաստում են մեր դեմ, պահանջվում են վորա-
կյալ մեխանիկներ, տեխնիկներ, պահանջվում են
վոչ միայն մեռնելու պատրաստ մարդիկ, այլ այն-
պիսիները, վորոնք կարողանան հմտությամբ վար-
վել այդ ըստ ամենայնի ահեղ և բավականին ան-
հաճո պատերազմական մեքենայի յուրաքանչյուր
պատուակի հետ» (Վորոշիլով): Հենց այժմ պետք
ե յուրացնել այդ զինվորական տեխնիկան, սովորել
կառավարել և դործադրել այն գալիք պատե-
րազմում: «Մեզ վրա կատարվող հարձակմանը մենք
պարտավոր ենք հակադրել մեր յերկաթյա, լավ
վարժված, քաղաքականապես կայուն, լավ սպա-
ռազինված բոլցինյան բանակը... Մենք պետք ե
գործն այնպես զնենք, վոր առաջիկա պատերազ-
մին հաղթենք «Քիչ արյունով» և այդ պատերազ-
մը վարենք այն յերկրի տերրիտորիայի վրա, վո-
րըն առաջինը սուր կրաքաջնի մեզ վրա» (Վո-
րոշիլով):

Ահա ինչու Համլկօթեմ-ի IX համագումարը
բարձր պահանջներ առաջարկեց յուրաքանչյուր

կոմյերիտականի և ահա թե ինչու այդ պահանջ-
ները պետք ե իրագործվեն ամենակարճ ժամանա-
կամիջոցում:

Համլկօթեմ-ի IX համագումարին մենք
յեկանք կոմյերիտականների ուազմական ու-
սուցման անբավարար ցուցանիշներով: IX հա-
մագումարը նշեց, վոր կոմյերիտականների ընդ-
հանուր ուազմական ուսուցման, դիրեկտիվը չի
կատարված: Հենց ամենամուտ ժամանակներում
գործադրելով մեր բոլոր ջանքերը, մենք պետք ե
կտրականապես փոխենք այս դրությունը և կա-
տարենք համագումարի վորոշումը, վորտեղ աս-
ված ե՝ «Կոմյերիտականների ուազմական աշխա-
տանքների թափին ու բոլվանդակությունը համա-
գումարը գտնում և անհամապատասխան յերկրի
պաշտպանության և ԲԳԻԲ-ի նոր տեխնիկական
սպառադինման, ժամանակակից պահանջներին և
առաջարկում և անհամապատասխան յերկրի-
տականների ընդհանուր պարտադիր ուազմական
ուսուցման ինդիքները, պահանջելով, վոր յու-
րաքանչյուր կոմյերիտական յուրացնի ընդհա-
նուրի մինիմումը և հատուկ ուազմական՝ դլխա-
վարապես տեխնիկական գիտելիքներից մեկը:
Կոմյերիտմիության շարքերում տեղ չպիտի ունե-
նան նրանք, ովքեր թերապևտական են ուազմա-

կան պատրաստության անհրաժեշտությունը և
նրանք, ովքեր որեց որ չեն տանում ռազմա կան
աշխատանքներ»:

Յուրաքանչյուր կոմյերիտական պետք ե գե-
տենա այն պարտավորությունները, վոր դրված
Են նրա վրա միության կանոնադրությամբ: Ահա
թե ինչ ե ասում կանոնադրությունը. «Կոմյերի-
տականը պետք ե հարկավոր բողեյին գենքը ձեռ-
քին կանգնի յերկրադնդի միակ աշխատանքի
հանրապետության պաշտպանության համար: Նա
պետք ե ուսումնասիրի ուղմական դործը, սրբ-
տալօր ե տիրապետել ուղմական դիսցիպլիննե-
րից վորեկ մեկին, լինել ամենից որինակելի,
կարգապահ կարմիր բանակային ու ու կարմիր
նախառորմային, պատերազմի ժամանակ լինել
կրակի առաջավոր դժի վրա, համարձակ նայել
վտանգին և պատրաստ լինի իր կյանքը տալու
պրոլետարիատի շահերի համար»:

Պատրաստվելով մեր պրոլետարական պետու-
թյան պաշտպանության համար, մենք պետք ե
շատ լավ իմանանք, վոր դասակարգերի գալիք
պատերազմը լինելու յի համառ ու անողորմ, վոր
նրանում գործադրությունը յի վոչնչացնելու մինչ
այժմ չտեսնքած տեխնիկա, վորը պահանջում ե
քարտիկների պատրաստության բարձր մակար-

դակ: Այդ պատերազմին մենք պետք ե պատ-
րաստվենք ամենայն որ: Այսպես են լX համա-
դումարի վորոշումները կոմյերիտականների
ռազմական ուսուցման մասին: Իսկ վորո՞նք են
այդ վորոշումները կյանքում կիրառելու միջոց-
ները:

Կոմյերիտմիութենական կազմակերպություն-
ների առաջին և հիմնական անելիքն այժմ կայտ-
նում ե նրանում, վորպեսզի ամենակարև ծամա-
նակամիջոցում բոլոր կոմյերիտականները մտնեն
ՊԱ.Ձ.Բ-Ավիաքիմի շարքերը և ընդգրկվեն ուսուց-
կան ուսուցմամբ: Կոմյերիտմիության ՊԱ.Ձ.Բ-Ա-
վիաքիմում կատարած աշխատանքների մեջ պետք
ե այժմ անմիջապես վճռական բեկում կատարվի:
Կոմյերիտմիությունը ՊԱ.Ձ.Բ-Ավիաքիմի ամրող
սխտեմում պետք ե ստեղծի ամուր և ուժեղ ակ-
տիվ, դասնա առաջինը ՊԱ.Ձ.Բ-Ավիաքիմի ամրող
զինվորական աշխատանքների մեջ: Կոմյերիտ-
միութենական բոլոր կազմակերպությունները
պետք ե ոգնեն ՊԱ.Ձ.Բ-Ավիաքիմին ուսուցման նոր
կայաններ կազմակերպելու, այդպիսիք կահավորե-
լու համար միջոցներ ու նյութեր փնտրելու, շեն-
քեր գտնելու, նյութեղեն մասը վերանորոգելու
և այլ աշխատանքների մեջ:

ՊԱ.Ձ.Բ-Ավիաքիմի ռազմական ուսուցումը

տարվում և ուսուցման կայաններում, ուս. մինա-
շարքային միավորներում, ԲՈՒՀ-երն ընդ ւնվե-
լու զինվորական նախապատրաստական դ սըն-
թացներում, ծովային նավատորմի կիսաեկի-
պաժներում և այլն: Ռազմական ուսուցման սիս-
տեմն ընդհանրապես ընդդրկում է մարտական
սպառաստման բոլոր հիմնական տեսակները և
պատրաստում կաղբեր ըստ զորքի բոլոր հիմնա-
կան տեսակների, վորը հնարավորություն է տա-
լիս յուրաքանչյուր կոմյերիտականի գենքի տե-
սակն ընտրել ըստ իր հայեցողության: Բայց և
այնպես յուրաքանչյուր կոմյերիտական զորքի
տեսակն ընտրելիս, պետք է յելք ընդունի վոչ մի-
այն իր անձնական շահերը, այլ և այն, թե զոր-
քի վոր տեսակին նա ավելի յե համապատաս-
խանում իր Փիղիկական վիճակով, գենքի վոր
տեսակին ավելի մոտ է իր կվալիֆիկացիան, ուսղ
մական պատրաստության բնոչ ձեվեր են անց-
կացվում իր քաղաքում, չքանում և այլն, այն
հաշվով, վոր նա հնարավորություն ունենա առանց
վնասելու արտադրության մեջ կատարած իր հիմ-
նական աշխատանքներին, հաճախել ուղմական
պարապմունքներին:

Կոմյերիտականների պարտադիր ուղմական
ուսուցման հիմնական ձեվը հանդիսանում է ու-

ուսուցման կայաններում և դասընթացներում պա-
րապելը: Դրա համար ուսուցման կայաններում է
գասլնթացներում ուսուցումն այնպես պետք է
դրվի, վոր զուգադիմի կայաններին և դասըն-
թացներին կցված ձեռնարկների ու հիմնարկների
հանդատի որերին: Պնազ և այնպես անել, վոր
կոմյերիտականները մի ամսվա մեջ պարտադիր
ուղմական ուսուցմանը տրամադրեն վոչ պակաս
քան 12 ժամ (3 հանդատի որ 4-ական ժամ): Վե-
րակառուցելով և զարդացնելով կոմյերիտմիու-
թյան ամբողջ ուղմական ուսուցումը, մենք
պետք է հաշվի առնենք կոմյերիտմիության և
ՊԱԶԼ-Ամիեռքի առաջավոր քջիջների ուղմա-
կան աշխատանքների փորձը, վոչ մի գեղ-
քում թույլ չտալով թեքումներ ամեն անսակի
ուսումնա-շարքային միավորները վոչնչացնելու
ուղղությամբ: Մի քանի մեծ գործարաններում,
մենք այժմ ունենք հրաշալի ուսումնա-շարքային
միավորներ, վորոնք մեծ դժվարությամբ ու
հաստատակամությամբ սարքավորվեցին վորոչ
չափի նյութեղեն մասերով, ձեռք բերին կազմա-
կերպչական փորձ և ուսումնասիրում են իրենց
արտադրությանը մոտ կանգնած զորքի տեսակը:
Այդպիսի ուսումնա-շարքային միավորներին
պետք է ամեն կերպ խրախուսել, ցույց տալ նյայ-

թական ոգնություն, կցելով զբահանք աղան
կազմ և այլն: Նրանցից ավելի ամուսնութը պետք
է հենց այստեղ, գործարանին կից վերած. և ու-
սուցման կայանների, կցել նրանց ուրիշ դորձա-
րանների կոմյերիտականներ, վորոնք ցանկա-
նում և ուսումնասիրել տվյալ զինադրական մտս-
նադիսությունը:

Հին ուսուցման կայանները լայնացնելու և
նորերը կազմակերպելիս անհրաժեշտ և մեծ ու-
շագրություն դարձնել զբահամասերի զինվորա-
կան տեխնիկան ուսումնասիրող ուսուցման կա-
յաններ ստեղծելու վրա: Բնդ վսրում պետք է
յենել գլխավորապես նրանց. թե ի՞նչ մասնա-
գիտության կոմյերիտականներ են կցվում տվյալ
ուսուցման կայանին: Որինակ, յեթե կայանին
կցված են ավտոմոբիլային գործարանի կամ դա-
րաժի կոմյերիտական բանկորներ, նշանակում ե
տվյալ կայանում անհրաժեշտ և պատրաստել
գլխավորապես մարտական մեքենաներ վարող-
ներ, այդ մեքենաների համար դնդացրորդներ,
հրետավորներ, ուսումնասիրել տակտիկան, զբա-
համեխամուսմասեր: Նույնը նաև մեքենա-տը-
րակտորային կայաններում, խորհ. տնտեսու-
թյուններում և այլն: Ռազմական գիտելիքների
խմբակներ պետք ե պահել միայն այնտեղ, վոր-

տեղ հնարավոր չե ուսուցման կայաններ ստեղ-
ծել (գյուղում, ցրված մանր բնակավայրերում ու
ձեռնարկներում և այլն) և այնտեղ, վորտեղ
պարտադիր ռազմական ուսուցման մեջ չեն ընդ-
գրկված փոքրատարիք կոմյերիտականները:

Կոմյերիտմիության ամեն տեսակի ուղմա-
կան ուսուցումները պետք է յենթարկվեն զինվո-
րկան խիստ կարգապահության և պատասխա-
նատվության: Կարդապահությունը, պլանայ-
նությունը և հետեւողականությունը ուսուցման
մեջ հաջողության հիմքն են կաղմում: I աստի-
ճանի ծրագիրը սովորելուց II աստիճանի ծրա-
գրին անցնել, II աստիճանի ծրագիրը սովորե-
լուց ջոկատների և զորախաղերի ուսմունքին անց-
նել, այսպես և ուսուցման ճանապարհը: Ամեն
տեսակի «զորախաղերն» ու դաշտ դուրս դալը մի-
միայն այն ժամանակ ողտակար ու հետաքրքրա-
կան կլինեն, յերբ դրա համար տարված կլինեն
բավականին լուրջ ուսուցման պատրաստություն-
ներ, և յերբ դաշտ դուրս դալը կլինի լավ կաղ-
մակերպված, նյութապես ապահովված և վոր
նրա գլուխ կանգնած կլինեն լավ պատրաստված
ընկերներ:

Կոմյերիտմիության պլանաչափ մարտական
պատրաստության գործում հրաշալի հիմք դրեց

«Կոմսոմոլսկայա Պրավդա»-ն, վորն առաջարկեց կոմյերիտմիության աշխանային զորախաղերը կարմիր բանակի մասերի հետ անցկացնելու ինդիրը և նշեց նրա պատրաստության կոնկրետ պլանները, «մարշրուտներ»։ Մարտական պատրաստության «մարշրուտները» ուսման պլան են առաջադրում, վորը պահանջում է ուսուցման I աստիճանն ավարտել, այսինքն՝ անհատ մարտիկին պատրաստել մինչեվ մայիսի 15-ը։ II աստիճանի ուսուցումը, այսինքն՝ մանր ստորարաժանումներ պատրաստել մինչեվ սեպտեմբերի 15-ը և մինչեվ ԲԳԿԲ-ի աշխանային զորախաղերը, անցկացնել մի քանի ջոկատային ուսուցումներ կարմիր բանակի հետ միասին։ Կոմյերիտմիութենական բոլոր կազմակերպությունները պետք է հիշեն, վոր միտյն կոմյերիտական լավագույն ջոկատներին պետք է թույլատրվի մասնակցել զորախաղերին։ Լինել լավագույն կոմյերիտական ջոկատը, պայքարել զորախաղերին մասնակցելու պատվի, մարտական պատրաստության պլանների կատարման ու դերատակարման համար, պետք է դառնա կոմյերիտմիութենական յուրաքանչյուր կազմակերպության, յուրաքանչյուր կոմյերիտականի դործը։

Կոմյերիտմիությանն անհրաժեշտ է, արտա-

